# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար հասարակական տրանսպորտի աշխատանքի և կանխիկ դրամի մուտքի վերահսկման համար ծրագրային ապահովման մշակման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԳՀԾՁԲ-23/68 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 16-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/68 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի փետրվարի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՕՄՆԻԿՈՄՄ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի փետրվարի 1-ին կատարված փոփոխությունների արդյունքում հստակեցվել է ապրանքի գնման ժամանակացույցը և հաստատվել է դրա ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 1-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2024 թվականի հունվարի 16-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/68 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ**